Ալֆա ՍՊ ընկերության և Լեգիտիմուս ՍՊԸ-ի միջև 13.06.2025թ. կնքվել է իրավաբանական օգնության թիվ L/49/25 պայմանագիրը որի 4.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմում է 500.000 ՀՀ դրամ, ինչպես նաև հաշվի առնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունը, Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գալիս է այն եզրահանգման, որ պահանջվող և կողմերի միջև պայմանագրով սահմանված փաստաբանի վարձատրության չափը նշված գործով ողջամիտ է չէ, ուստի որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 400.000 ՀՀ դրամը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցադիմումը ենթակա է բավարարման պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի,

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Ֆիրմա Ալֆա ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձանց՝ «Պրեմիում Լեդ» ՍՊ ընկերության, «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի, «Հպարտ Քաղաքացի» ՍՊ ընկերության, «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության՝ «Պրեմիում ԼԵԴ» ՍՊ ընկերության, «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի, «Հպարտ քաղաքացի» ՍՊ ընկերության և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից արձանագրության 14-րդ չափաբաժնով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-8/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող ճանաչելու և նույն արձանագրության 09.06.2025 թվականի 4.1 կետը՝ «Պրեմիում ԼԵԴ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակիորեն.

1.1. Անվավեր ճանաչել «Պրեմիում ԼԵԴ» ՍՊ ընկերության, «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի, «Հպարտ քաղաքացի» ՍՊ ընկերության և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից արձանագրության 14-րդ չափաբաժնով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-8/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող ճանաչելու և նույն արձանագրության 09.06.2025 թվականի 4.1 կետը՝ «Պրեմիում ԼԵԴ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասը:

2. Հայցը մնացած մասով մերժել:

3. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ Ֆիրմա Ալֆա ՍՊ ընկերության բռնագանձել 141.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

4. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ Ֆիրմա Ալֆա ՍՊ ընկերության բռնագանձել 400.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

5. Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ծիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am